



**ԲՈՂՈՔԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԱՐՏԱՅԱՅՏՄԱՆ
ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆ
ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ***

ՀՏԴ 81`42

DOI: 10.52063/25792652-2023.3.18-100

ԳԱՅԱՆԵ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Վ. Բոլոսովի անվան պետական համալսարանի
ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետի անգլերենի ամբիոնի վարիչ,
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
gyeghiazaryan@hotmail.com
ORCID: 0000-0002-6024-7713

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վ. Բոլոսովի անվան պետական համալսարանի ռուսաց և օտար լեզուների
ֆակուլտետի անգլերենի ամբիոնի սասիորանտ, դասախոս,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
annaavetisyan987@gmail.com
ORCID: 0009-0004-6396-164X

Հոդվածի նպատակն է քննել բողոքի անուղղակի արտահայտման լեզվական առանձնահատկությունները հայերեն համացանցային խոսույթում: Հետազոտության նպատակով պայմանավորված՝ հոդվածում առաջադրվել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բողոքի անուղղակիության մակարդակների սահմանումը, ինչպես նաև բողոքի անուղղակի արտահայտման ուսումնասիրությունը՝ ընդգծելով դրա առկայացման լեզվական միջոցները:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է ներկայումս համացանցային խոսույթում անուղղակի եղանակով բողոքն արտահայտելու առաջնակարգությամբ և օգտատերերի վրա դրա գործած ազդեցության քննության կարևորությամբ:

Լեզվաբանական վերլուծության մեթոդների ընտրությունը փաստարկված է ուսումնասիրվող նյութի բնույթով և հետազոտության նպատակով: Նյութի քննությունն իրականացվել է նկարագրական վերլուծության մեթոդով:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ համացանցային խոսույթում օգտատերերն իրենց բողոքներն արտահայտում են ըստ Զ. Հաուսի և Գ. Կասպերի առաջադրած բողոքի անուղղակիության սանդղակի բոլոր մակարդակների: Վերջիններն առկայանում են համացանցային խոսույթում մի շարք լեզվական միջոցներով, որոնցից գերակշռում են բացասական հարանշանակություն ունեցող և առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային և դարձվածային միավորները,

* Հոդվածը ներկայացվել է 24.07.2023թ., գրախոսվել՝ 02.09.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2023թ.:

ժխտական կառույցները, ինչպես նաև անուղղակի հարցադրումները: Բողոք - հրապարակումներում և մեկնաբանություններում կիրառվում են նաև կետադրական տարբեր նշաններ: Բողոքի անուղղակի արտահայտումն առավել հաճախ հեզնական բնույթի է:

Հիմնաբառեր՝ բողոք, անուղղակիություն, համացանցային խոսույթ, անուղղակի հարցադրումներ, բացասական հարանշանակություն ունեցող բառային և դարձվածային միավորներ, հեզնանք, ասույթ, պրոպոզիցիայի բովանդակություն:

Ներածություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը առաջադրել է մարդկային հաղորդակցության նոր կաղապար՝ ձևավորելով տեղեկատվության ստացման, մատուցման և փոխանցման ձևերը: Բողոքն այդ հաղորդակցության անբաժանելի մասն է կազմում իր բազմակողմ գործառույթների և հանրային ազդեցության շնորհիվ:

Ժամանակակից թվային աշխարհում առցանց հարթակները դարձել են բողոքներն ու դժգոհությունները բարձրաձայնելու առանցքային միջոցներ՝ նոր շունչ հաղորդելով բողոքի արտահայտման ձևերին ու ռազմավարություններին:

Բողոքի անուղղակիության մակարդակների սահմանման տեսական դրույթները

Բողոքը սահմանվում է որպես հասցեատիրոջն ուղղված դժգոհության արտահայտում: Բողոքի միջոցով հասցեագրողը մատնացույց է անում հասցեատիրոջ վարքի այն գծերը, որոնք դժգոհելու պատճառ են դարձել (Laforest 2-3): Նման վարքագիծը ձևավորվում է սոցիալական նորմերի խախտման միջոցով և չի արդարացնում հասցեագրողի՝ բողոքողի ակնկալիքները (Goffman 95-96; Laforest 2-3):

Դ. Բոքսերն առանձնացնում է բողոքի երկու հիմնական տեսակ՝ ուղղակի և անուղղակի (Boxer 29): Ուղղակի բողոքն արտահայտելիս հասցեագրողը կարծում է, որ հասցեատերը ոչ միայն պատասխանատվություն է կրում ենթադրյալ արարքի համար, այլև պետք է պարտավորվի ընդունել և փոխել իրադարձությունների հետագա ընթացքը (Boxer):

Անուղղակի բողոքը սահմանվում է որպես դժգոհության տևական կամ կրկնվող արտահայտում, որը չի ենթադրում ստեղծված տհաճ իրավիճակի փոփոխություն կամ բարելավում (Clyne 49): Անուղղակի բողոքները մեղմացնում են հասցեագրողի հույզերը և բեռնաթափում բացասական զգացողությունները (Daly, Holmes, Newton & Stubbe 948):

Անուղղակի բողոքը տարբերվում է ուղղակի բողոքից նրանով, որ հասցեատերը ոչ պատասխանատվություն է կրում, ո՛չ էլ ի վիճակի է մեղմելու ենթադրյալ արարքի հետևանքները: Բացի այդ, ուղղակի բողոքն արտահայտվում է հասցեատիրոջ՝ մեղավոր կողմի ներկայությամբ, իսկ անուղղակի բողոքի պարագայում հասցեատերը ներկա չէ (Boxer 29):

Ըստ Ջ. Հաուսի և Գ. Կասպերի՝ *հասցեատեր* Կ պետք է կատարած լինի որևէ *P գործողություն*, որը *հասցեագրող* X-ը կարող է մեկնաբանել որպես իր նկատմամբ իրականացրած բացասական գործողություն (House, Kasper 159):

Ջ. Հաուսն և Գ. Կասպերն առանձնացնում են անուղղակիության 8 տարբեր մակարդակ, որոնք պայմանավորված են հետևյալ չափանիշներով՝

1. P-ն նշվում է անուղղակի (ներակա) կամ արտակա եղանակով,
2. X-ի կողմից P-ի բացասական որակավորումն արտահայտված է արտակա եղանակով,
3. Y-ի ակտիվ ներգրավվածությունն արտահայտված է անուղղակի կամ արտակա եղանակով,

4. Ա՛ Y-ի կատարած գործողությունը, Ա՛ հենց Y-ի բացասական որակավորումն արտահայտված են անուղղակի և արտակա եղանակով:

Հարկ է նշել, որ 8 մակարդակներից առաջինը բնորոշվում է որպես առավել անուղղակի արտահայտված բողոք, մինչդեռ ութերորդը նկարագրվում է որպես ուղիղ բողոք (House, Kasper 159):

Բոլոր ցածր մակարդակներում Y-ը պետք է ենթադրություն կատարի՝ հիմնվելով իրավիճակային համատեքստի վրա, որն ընդգրկում է X և Y զրուցակիցների միջև առկա հարաբերությունների և X և Y-ի կողմից ճանաչված սոցիալական նորմերի ամբողջությունը: Այս ենթադրության միջոցով Y-ին հնարավորություն է ընձեռվում մշակել Ա՛ պրոպոզիցիայի համապատասխան բովանդակությունը, Ա՛ X-ի արտաբերած ասույթի ենթադրվող իլոկուտիվ ուժը (House, Kasper 160):

1. Y-ի ներկայությամբ U ասույթն արտաբերելով՝ X-ն ակնարկում է այն մասին, որ
 - տեղյակ է, որ P-ն իրականացվել է,
 - Y-ը կատարել է P-ն:
2. Արտակա եղանակով հաստատելով, որ P իրականացվել է, X-ը ակնարկում է, որ Y-ն է կատարել P-ն:
3. Արտակա եղանակով պնդելով, որ P-ն բացասական ազդեցություն է ունեցել իր վրա, X-ը ակնարկում է, որ Y-ն է կատարել P-ն:
4. Արտակա եղանակով հարցնելով Y-ին P-ի իրականացման հանգամանքների մասին կամ նշելով, որ Y-ն ինչ-որ կերպ առնչվում է P-ի իրականացման հանգամանքների հետ, X-ն ակնարկում է, որ Y-ն է կատարել P-ն:
5. X-ը արտակա եղանակով պնդում է, որ Y-ն է կատարել P-ն:
6. Արտակա եղանակով պնդելով, որ P գործողությունը, որի համար Y-ն պատասխանատու է, բացասական է, կամ արտակա եղանակով նշելով, որ Y-ի չի ընտրել այլընտրանքային այնպիսի գործողություն, որը ավելի գերադասելի է՝
 - X-ն ակնարկում է, որ Y-ը վատ է/ կամ
 - X-ը արտակա եղանակով պնդում է, որ Y-ը կատարել է P-ն, և որ P-ն բացասական ազդեցություն է ունեցել X-ի վրա՝ այդպիսով նաև ակնարկելով, որ Y-ը վատն է:
7. X-ն արտակա եղանակով պնդում է, որ Y-ի իրականացրած P գործողությունը բացասական ազդեցություն ունի:
8. X-ն արտակա եղանակով պնդում է, որ Y-ը վատն է (House, Kasper 160):

Այս համատեքստում Ա. Թրոսբորգը նշել է, որ բողոքը կարող է ունենալ անուղղակիության տարբեր մակարդակներ, որոնց նկարագրելու համար առաջարկել է հետևյալ չափանիշները.

- պրոպոզիցիայի բովանդակություն (բողոքի առարկա) (P),
- հասցեագրող՝ բողոքող (C),
- հասցեատեր՝ մեղադրյալ (A) (Trosborg 315):

Ինչպես Ջ. Հաուսը և Գ. Կասպերը, Ա. Թրոսբորգը նույնպես առաջարկում է բողոքի անուղղակիության մակարդակը սահմանող գործոնները դասակարգել ըստ հետևյալ խմբերի՝

- P նկարագրում կամ չի սահմանում բողոքի առարկան,
- P բացասական է՝ արտակա կամ ներակա եղանակով
- A կատարել է P՝ արտակա կամ ներակա եղանակով
- C որակավորում է A գործողությունները բացասական՝ արտակա կամ ներակա եղանակով
- C որակավորում է A-ն որպես վատ մարդ՝ արտակա կամ ներակա եղանակով (Trosborg 315):

Այսպիսով՝ հետազոտության նպատակից ելնելով՝ ուսումնասիրվել են բողոքի անուղղակիության մակարդակի դրսևորումները հայերեն համացանցային խոսույթում, ներկայացվել են դրանց առկայացման լեզվական միջոցները՝

հետազոտության հիմք ընդունելով Ջ. Հաուսի և Գ. Կասպերի առաջարկած բողոքի անուղղակիության մակարդակները, իսկ օրինակներն ընտրվել են **Facebook** (www.facebook.com 15.07.2023) սոցիալական ցանցում հասանելի՝ անուղղակիորեն արտահայտված բողոք-մենաբանություններից:

Բողոքի անուղղակիության լեզվական առկայացումը հայերեն համացանցային խոսույթում

Համացանցային խոսույթում բողոքը հաճախ արտահայտվում է անուղղակիության սանդղակի ամենաստորին՝ 1-ին մակարդակին բնորոշ միջոցներով: Դրանք մեծամասամբ նկարագրվում են ակնարկներով և ոչ բացահայտ արտահայտված մեղադրանքներով: Նման հրապարակումներում բողոքը կամ բողոքի պատճառները հստակ չեն նշվում, պարզապես լեզվական հնարների միջոցով ակնարկվում է դրանց մասին:

Ուշագրավ է Առաջին ալիքի Ֆեյսբուքյան էջի գրառումն այն մասին, որ Եվրատեսիլ 2023-ի Հայաստանի Հանրապետության պատվիրակ Բոյունետն *Անհասցե նամակներ՝ ապագա սիրելիին* նամակագրության մեկնարկ էր տվել և հրավիրում էր բոլորին՝ բարձրաձայնելու իրենց զգացմունքների մասին: Այս ուրախալի իրադարձությունը շատ օգտատերերի բողոքի պատճառ է դարձել, քանի որ մասնակիցներից շատերը, ներառյալ Բոյունետը, նամակները գրել էին անգլերենով: Օգտատերերից մեկն ակնարկի միջոցով անուղղակիորեն հեզվել էր անգլերենով գրելու որոշումը: Բողոքի արտահայտման միջոցներն էին *չակերտներով* ներկայացված «*Սիրելիներ*» բառային միավորը և *միայն* սաստկական *ածականը*:

Փաստորեն «սիրելիները» միայն անգլերեն են հասկանում: 🤔

(<https://www.facebook.com/ArmPublicTV/posts/pfbid02kCMm7zvutsjtBZovPVKkXTb2egfi7gisj3zx8jokt6qBQJvM2NNfaa7BLWv4ZdCvI> 15.07.2023)

Բողոքի անուղղակիության սանդղակի հաջորդ մակարդակը ներկայացնում է ակնարկի միջոցով հավանական խնդրի մասին բարձրաձայնելը: «ԳԼՈՐԲԻՆԳ»- ի («ԳԼՈՐԲԼ ՇԻՓՓԻՆԳ» ՍՊԸ) ֆեյսբուքյան էջում նույնպես հասանելի են այնպիսի հրապարակումներ, որոնցում օգտատերերն անուղղակի եղանակով բողոքում են ընկերության՝ զանգերին ու նամակներին չարձագանքելու գործելակերպից: Օգտատերերից մեկը, կիրառելով առօրյա-խոսակցական ոճին բնորոշ *խաբար* բառային միավորը, *հարցադրումների* միջոցով փորձում է տեղեկանալ Globbing-ի նման գործելակերպի պատճառների մասին: Պետք է նշել, որ այս օրինակում նկատելի է ակնարկի միջոցով արտահայտված հեզվական բողոք, որին բնորոշ է խոսքի անուղղակիություն:

Globbing-ից խաբար ե՞ք ,արձակուրդ ե՞ն

(<https://www.facebook.com/karindjagharian/posts/pfbid0rKWRRekTWD7tx9BWj1QpoUEyA4jywAzSsiuW3V1WwbHdBpj23yYwLV7SS2mwJ51CI> 15.07.2023)

Բողոքի անուղղակիության սանդղակի 3-րդ մակարդակի օրինակ ենք հանդիպել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ֆեյսբուքյան էջում տեղադրված սպառողի ուղեցույցին առնչվող հրապարակման մեկնաբանություններում: Օգտատերերից մեկը արտական եղանակով ոչ միայն մատնանշում է հասցեատիրոջ կատարած գործողությունների բացասական հետևանքները, այլև ակնարկում է նրա ներգրավվածությունը ստեղծված իրավիճակում: Օգտատերն իր բողոքն անուղղակի եղանակով արտահայտելու նպատակով կիրառել է *պետք է* հարկադրական եղանակի բաղադրիչը, ինչպես նաև առաջարկել է *լուսավորենք կյանքը միասին* դրական

հարանշանակություն ունեցող կարգախոսը փոխարինել *փչացնենք տեխնիկան միասին* բացասական հարանշանակություն ունեցող կարգախոսով: Դա կարելի է բացատրել հաճախակի հոսանքագրվումների պատճառով էլեկտրական տեխնիկայի շարքից դուրս գալու հանգամանքով:

Ձեր կարգախոսը պետք է լինի ոչ թե «լուսավորենք կյանքը միասին» այ «փչացնենք տեխնիկան միասին»:

(https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid029Yg7cyaRigauuobq3DQZ592ntwR27NZHNMPX7eFNV3zM5Fvqqi7KZaUvyyv2ALrscI&id=104484464581562
15.07.2023)

Բողոքի անուղղակիության 4-րդ մակարդակի կիրառման ենք հանդիպել այն հրապարակման մեկնաբանություններում, որում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հերքում է լրատվամիջոցներում շրջանառվող այն հայտարարությունը, որ ընկերությունում գոյություն ունեցող խնդիրները պայանավորված են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին ունեցած պարտքով: Օգտատերերն իրենց բողոքներում նշում են բողոքի առարկայի մասին և ակնարկում են, որ հենց հասցեագրողն է մեղավոր ստեղծված իրավիճակի համար:

Մեկնաբանություններից մեկում օգտատերը մեկից ավելի *անուղղակի հարցադրումների* և *հարցական նշանների* կիրառման միջոցով փորձել է բարձրաձայնել հավանական խնդրի մասին և ակնարկել է, որ այդ խնդրի առաջացման մեղավորությունը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն է: Պետք է նշել, որ մեկնաբանությունը պարունակում է առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային միավորներ՝ *էլ, էս* և ժխտական ստորոգումներ:

Վեոլիա Ջուր / Veolia Armenia նորությունն *չկա՞ շատ ենք սպասելու՞* 😞 *էլ դիմանալու չի էս շոգին* 😞😞

(<https://www.facebook.com/veolia.armenia/posts/pfbid08iJ5dwrECKToQ8FKBk8j8tbdJzeE5WhYHMNF5CmyKMDyGNom1FM5xTafJe1s4VHjI> 15.07.2023)

Բողոքի անուղղակիության ասնդղակի 5-րդ մակարդակին բնորոշ է հասցեագրողի կողմից հասցեատիրոջը բացահայտ մեղադրելու ասույթների կիրառումը: Նման օրինակ ենք նկատել «12 կտոր պիցցա» ռեստորանի ֆեյսբուքյան էջի «կարծիքներ» բաժնում, որոնցում օգտատերերը տարբեր լեզվական միջոցներով ակնարկում են մենդի վատ որակի և վատ պատրաստված լինելու մասին: Ուշագրավ է այն օրինակը, որում օգտատերը *չակերտավոր* շնորհակալություն է հայտնում խոհարարին և տեղադրում այրված մենդի լուսանկար՝ անուղղակիորեն իր դժգոհությունն արտահայտելով առաքված մենդի վերաբերյալ:

«Շնորհակալությունս» փոխանցեք ձեր խոհարարին այսօրվա լանչիս համար:

(<https://www.facebook.com/AshKaraPoghosyan/posts/pfbid0kY1x4U3QbVdfQxxiPgWnwYifPmhFhyBSJqftgaKdGLPZfsnuX8BGAS7svBuJG9rJI> 15.07.2023)

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պարտքին առնչվող գրառման մեկնաբանություններում հանդիպել ենք նաև բողոքի անուղղակիության ասնդղակի 6-րդ մակարդակի բնորոշ հատկանիշներ: Օգտատերը ոչ միայն պնդում է, որ հասցեատիրոջ մեղքով է ստեղծվել տվյալ իրավիճակը, այլև ակնարկում է այն մասին, որ հասցեատերը պետք է պատասխանատվություն կրի դրա համար:

Իր ասելիքը շեշտադրելու նպատակով լեզվական միջոցներից կիրառում է *բացարձակ* սաստկական ածականը և *սպանդ սկսել* դարձվածային

արտահայտությունը, որոնք մատնացույց են անում տվյալ հաստատության վարած քաղաքականության հավանական բացասական հետևանքները:

Մարդիկ բացարձակ մեղավոր չեն ձեր ներքին տարածայնությունների համար... սպանդ եք սկսել:

(<https://www.facebook.com/veolia.armenia/posts/pfbid08iJ5dwrEckToQ8FKBk8j8tbdJzeE SWHyHMNF5CmyKMDyGNom1FM5xTafJe1s4VHj1 15.07.2023>)

Անդրադառնալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի պարտքի վերաբերյալ հրապարակմանը՝ կարող ենք փաստել, որ օգտատերերը կիրառել են նաև բողոքի անուղղակիության սանդղակի 7-րդ մակարդակին բնորոշ ասույթներ: Օգտատերերը բացասական հարանշանակություն ունեցող բառային միավորներով և դարձվածային արտահայտություններով հանդիմանում են տվյալ կազմակերպությանը՝ շոգ եղանակին ջրանջատում իրականացնելու համար:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն մեկնաբանությունը, որում օգտատերը կիրառում է *իրար միս ուտել* և *տունտունիկ խաղալ* դարձվածային արտահայտությունները՝ սաստկացնելով իր դժգոհությունը և անուղղակիորեն հեգնելով տվյալ կազմակերպության անգործությունը:

Մինչև դուք իրար միս եք ուտում ու իրար եք մեղադրում, մարդիկ 40 աստիճան շոգին առանց ջրի են մտում: Բայց չէ, հանկարծ գործով չգբաղվեք, տունտունիկ խաղացեք:

(<https://www.facebook.com/veolia.armenia/posts/pfbid08iJ5dwrEckToQ8FKBk8j8tbdJzeE SWHyHMNF5CmyKMDyGNom1FM5xTafJe1s4VHj1 15.07.2023>)

Բողոքի անուղղակիության սանդղակի ամենավերին՝ 8-րդ մակարդակը ուղղակիորեն արտահայտված բողոքներն են: Նման օրինակ ենք հանդիպել ՀԷՑ-ի սպառողի ուղեցույցի մասին հրապարակման մեկնաբանություններում: Օգտատերը հասցեատիրոջը բացահայտ մեղադրելու նպատակով ընտրել է այնպիսի լեզվական միջոց, ինչպիսին է կրկնությունը: «Կառույց, որը» արտահայտությունը մի քանի անգամ կրկնելով՝ օգտատերը ոչ միայն վատաբանում է տվյալ կառույցին, այլև իր դժգոհությունն է արտահայտում նրանց կատարած աշխատանքի վերաբերյալ: Մեկնաբանությունը զերծ չէ նաև տվյալ համատեքստում բացասական հարանշանակություն ունեցող բառային և դարձվածային միավորներից, մասնավորապես՝ *ահավոր վատ*, *կողք դնել*, *հեքիաթ պատմել*: Հարկ ենք համարում նշել, որ մեկնաբանությունն ամփոփվում է մեղմասույթային արտահայտությամբ, այսինքն՝ *ատել* բառային միավորի փոխարեն օգտատերը նախընտրել է ժխտական կառույց ունեցող արտահայտություն կիրառել, այն է՝ *տանել չկարողանալ*:

ՀԷՑ-ը չզիտեմ, բայց դուք մեզ պարտք եք, որովհետև մենք ձեր սպասարկման համար վճարում ենք, իսկ դուք մի *ահավոր վատ* աշխատող *կառույց եք, որը* ոչ մի կերպ իր պոմպերի հարցը չի կարողանում կարգավորել: *Կառույց, որի* օպերատորը անգամ իր աշխատանքը չի կարողանում պատշաճ կատարել: *Կառույց, որը* 2 օրը մեկ ջուրը առանց կանխավ գգուշացնելու անջատում, *հեռախոսը կողք է դնում*, ու մի նոր *հեքիաթ է պատմում* նույն պոմպի մասին: Եվ վերջապես *կառույց, որին տանել չի կարողանում* ո՛ր ղե հայ ազգը 🙄🙄🙄🙄

(<https://www.facebook.com/veolia.armenia/posts/pfbid08iJ5dwrEckToQ8FKBk8j8tbdJzeE SWHyHMNF5CmyKMDyGNom1FM5xTafJe1s4VHj1 15.07.2023>)

Ամփոփելով կարող ենք նշել, որ վերոբերյալ բողոք-մեկնաբանություններում հասցեատերը կրկնության, բացասական հարանշանակություն ունեցող բառային և դարձվածային միավորների միջոցով, ինչպես նաև ժխտական կառույցներով իր անմիջական բողոքն է արտահայտել հասցեագրողին:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով բողոքի անուղղակիության դրսևորումները և դրանց առկայացման լեզվական միջոցները՝ կարող ենք նշել, որ օգտատերերն արտահայտել են իրենց բողոքները՝ համաձայն Ջ. Ջաուսի և Գ. Կասսերի առաջադրած բողոքի անուղղակիության սանդղակի բոլոր մակարդակների: Խոսքի անուղղակիությունն առկայացել է լեզվական այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ բացասական հարանշանակություն ունեցող բառային և դարձվածային միավորները, բացասական կառույցները, անուղղակի հարցադրումները, ինչպես նաև կետադրական տարբեր նշանները: Հայերեն համացանցային խոսույթում բողոքի անուղղակի արտահայտումը հիմնականում հեզնական բնույթ է կրում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Boxer, Diana. Building Rapport through Indirect Complaints: Implications for Language Learning. *In Working Papers in Educational Linguistics*, Volume 5, Number 21, 1989:
2. Boxer, Diana. Social Distance Speech Behavior: the Case of Indirect Complaints. *Journal of Pragmatics* 19, 1993:
3. Clyne, Michael. Intercultural Communication at Work: Cultural Values in Discourse. *Cambridge University Press*, 1996:
4. Daly, Nicola, Holmes, Janet, Newton, Jonathan, Stubbe, Maria. Expletives as Solidarity Signals in FTAs on the Factory Floor. *Journal of Pragmatics* 36, 2004:
5. Goffman, Erving. *Relations in Public: Microstudies of the Public Order*. New York: Basic Books, 1971:
6. House, Juliane, Gabriele Kasper. *Politeness Markers in English and German*. Florian Coulmas (Ed.). Volume 2: Conversational Routine: Explorations in Standardized Communication Situations and Prepatterned Speech, Mouton, 1981:
7. Trosborg, Anna. *Interlanguage Pragmatics: Requests, Complaints, and Apologies*, Mouton de Gruyter, Berlin, New York 1995:
8. Laforest, Marty. *Scenes of Family Life: Complaining in Everyday Conversation*. *Journal of Pragmatics*, 2002:
[https://www.academia.edu/9493876/Scenes of family life Complaining in everyday conversation](https://www.academia.edu/9493876/Scenes_of_family_life_Complaining_in_everyday_conversation)
9. Facebook, www.facebook.com, Accessed: 15 July 2023:
10. Facebook, <https://www.facebook.com/ArmPublicTV/posts/pfbid02kCMm7zvutsjtBZovPVKkXTb2egfi7qjsj3zx8jokt6qBQJvM2NNfaa7BLWv4ZdCvI>, Accessed: 15 July 2023:
11. Facebook, <https://www.facebook.com/veolia.armenia/posts/pfbid08iJ5dwrEckToQ8FKBk8j8tbdJzeESWhyHMNF5CmyKMDyGNom1FM5xTafJe1s4VHjI>, Accessed: 15 July 2023:
12. Facebook, <https://www.facebook.com/AshKaraPoghosyan/posts/pfbid0kY1x4U3QbVdfQxxiPgWnwYjfPmhFhyBSJqftgaKdGLPZfsnuX8BGAS7svBuJG9rJl>, Accessed: 15 July 2023:
13. Facebook, <https://www.facebook.com/karindjagharian/posts/pfbid0rKWRRekTWd7tx9BWj1QpoUEyA4jywAzSsiuW3V1WwbHdBpj23yYwLV7SS2mwJ51CI>, Accessed: 15 July 2023:

14. Facebook, https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid029Yq7cyaRigauuobq3DQZ592ntwR27NZHNMPX7eFNV3zM5Fvqqi7KZaUvyyv2ALrscI&id=104484464581562, Accessed: 15 July 2023:

LINGUISTIC ANALYSIS OF INDIRECT COMPLAINT EXPRESSION IN ARMENIAN INTERNET DISCOURSE

GAYANE YEGHIAZARYAN

*Brusov State University, Russian and Foreign Languages,
Head of Chair of English, Doctor of Sciences (Philology), Professor
Yerevan, the Republic of Armenia*

ANNA AVETISYAN

*Brusov State University, Russian and Foreign Languages,
English Chair, Ph.D Student, Lecturer
Yerevan, the Republic of Armenia*

The aim of the article is to define the levels of complaint indirectness and investigate the linguistic means of indirect complaint expression within Armenian Internet discourse. The study not only scrutinizes the diverse types of complaints but also delves into the linguistic means for their indirect expression.

The topicality of this article arises from the prevailing tendency to voice complaints indirectly in Internet discourse and its potential influence on users.

The selection of linguistic analysis methods is justified by the nature of the studied material and the aim of the research. The examination of the material was carried out through linguistic descriptive analysis.

The research findings led us to conclude that the users express their complaints based on the scale of the indirectness levels suggested by J. House and G. Kasper. A number of linguistic means play a pivotal role in the skilful implementation of indirect complaint expression. Notably, lexical and phrasal units with negative connotations that are typical of the colloquial speech, along with the frequent use of negative constructions and indirect questions, are prominent in this regard. Additionally, diverse punctuation marks are employed in complaints to add subtlety to indirect complaint expressions, with sarcasm being a commonly observed characteristic in such instances.

Keywords: *complaint, indirectness, Internet discourse, indirect questions, lexical and phraseological units with negative connotation, irony, utterance, propositional content.*

ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ КОСВЕННОГО ВЫРАЖЕНИЯ ЖАЛОБЫ В АРМЯНСКОМ ИНТЕРНЕТ-ДИСКУРСЕ

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН

*заведующая кафедрой английского языка факультета русского и иностранных языков Государственного университета имени В. Брюсова,
доктор филологических наук, профессор,
г. Ереван, Республика Армения*

АННА АВETИСЯН

*преподаватель и аспирант кафедры английского языка факультета русского и иностранных языков Государственного университета имени В. Брюсова
г. Ереван, Республика Армения*

Целью данной статьи является определение уровней косвенности жалобы и исследование языковых особенностей косвенного выражения жалоб в армянском интернет-дискурсе. В ходе исследования мы не только тщательно анализируем различные виды жалоб, но также всесторонне изучаем языковые средства, используемые для косвенного выражения жалоб.

Актуальность данного исследования обусловлена приоритетом косвенных способов выражения жалоб в интернет-дискурсе и важностью изучения их воздействия на пользователей.

Выбор методов лингвистического анализа обусловлен характером изучаемого материала и целью исследования. Исследование материала проводилось с использованием методов описательного анализа.

Результаты исследования позволили нам сделать вывод о том, что пользователи выражают жалобы, основываясь на шкале уровней косвенности, предложенной Дж. Хаусом и Г. Каспером. Ряд языковых средств играет ключевую роль в грамотном использовании косвенного выражения жалобы.

Примечательно, что в этом отношении выделяются лексические и фразовые единицы с негативной коннотацией и характерные для повседневно-разговорного стиля негативные конструкции, а также косвенные вопросы.

Кроме того, в жалобах используются различные знаки препинания для того, чтобы усилить косвенное выражение жалобы. Косвенное выражение жалобы чаще всего носит иронический характер.

Ключевые слова: *жалоба, косвенность, интернет-дискурс, косвенные вопросы, лексические и фразеологические единицы с отрицательной коннотацией, ирония, высказывание, пропозициональное содержание.*